ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության դիրեկտոր

Սովետական Հայաստանում մշակվում են գիտության ամենատարբեր ճյուղերին վերաբերող պրոբլեմներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունների մեջ։

Մեծ չափերի է հասել հրատարակչության աշխատանքների ծավալը։ Միայն 1954—1955 թթ. հրատարակվել է 230 անուն գիրք, 2.230 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով։

Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս են տեսել՝ Վ. Հարությունյանի և Կ. Հովհաննիսյանի «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը», ակադեմիայի իսկական անդամ Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ», Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը», պրոֆ. Խ. Մոմջյանի «Լաֆարգը և մարքսիստական թեորիայի մի քանի հարցեր», պրոֆ. Ա. Տերտերյանի «Պերճ Պռոշյան» մենագրությունը, Ա. Հակոբյանի և Հ. Էլչիբեկյանի «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության», Ս. Սարգսյանի «Պալեոլիթը Հայաստանում», Ա. Ասլանյանի «Հետազոտություն երկրագնդի տեկտոնական դեֆորմացիայի տեսության վերաբերյալ» աշխատությունները։ Հրատարակվել են պրոֆեսորներ Կ. Ղաֆադարյանի, Բ. Առաքելյանի, Բ. Պիոտրովսկու հնագիտական պեղումներին վերաբերող փաստաթղթի ու հետաքրքիր ուսումնասիրությունները։

Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը մեծ ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գիտական գրականության հրատարակմանը։ «Նյութեր հայ ժողովրդի պատմության» սերիայով լույս են ընծայվել այնպիսի կարևոր աշխատություններ, ինչպիսիք են՝ Լ. Խաչիկյանի կազմած՝ 14 և 15-րդ դարերի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի երկու մեծածավալ գրքերը, Վ. Հակոբյանի պատրաստած «Մանր ժամանակագրություններ»-ի Ա. մասը և այլ աշխատություններ։

Քիչ աշխատանք չի կատարվում հայ սկզբնաղբյուրները ռուսերեն և օտար լեզուներով թարգմանելու բնագավառում։ Արդեն լույս են տեսել Փավստոս Բյուզանդի «Պատմությունը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Մխիթար Հերացու «Քերմայ Մխիթարություն» գործերի ռուսերեն թարգմանությունները։

Կարևոր գործ է պատմության ինստիտուտի աշխատակից Հ. Անասյանի «Հայ մատենագրություն» 10 հատորանոց աշխատությունը, որի առաջին հատորը հանձնված է տպագրության։ Այստեղ ամենայն մանրամասնությամբ տրված է հայ ողջ մատենագրությունը՝ ինքնուրույն և թարգմանական, ըստ որում լուծված են նաև բանասիրական բազմաթիվ լուրջ հարցեր։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը լույս է ընծայել հայ գրականության կլասիկներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակությունները, տպագրության պրոցեսում է Մ. Նալբանդյանին վերաբերող փաստաթղթերի ժողովածուն, ինչպես նաև Հ. Հակոբյանի երկերի ակադեմիական հրատարակությունը։ 1954—1955 թթ. ընթացքում այս ինստիտուտը հրատարակել է 34 անուն գիրք, որոնցից 26-ը ինքնուրույն ուսումնասիրություններ են։ Դրանք լայն հետաքրքրություն են առաջացրել ընթերցող հասարակության մեջ և արժանացել են դրական գնահատականի։

Ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայում մեծավաստակ գիտնական, հանգուցյալ Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի», 569 լեզուների համեմատությամբ 10 հատորանոց մեծ արժեք ներկայացնող աշխատությունը, որի երեք հատորները արդեն լույս են տեսել պրոֆ. Էդ. Աղայանի խմբագրությամբ։

Լեզվի ինստիտուտի գիտական կոլեկտիվի ամենակարևոր աշխատանքներից պետք է համարել ռուս-հայերեն քառահատոր մեծ բառարանի ստեղծումը, որի առաջին հատորը լույս է տեսել, երկրորդ հատորը տպագրվում է, իսկ վերջին երկու հատորները պատրաստվում են հրատարակության հանձնելու։

Ակադեմիայի արվեստների պատմության ու տեսության սեկտորը հրատարակել է Ա. Մնացականյանի «Հայկական դարդարվեստ» մեծածավալ մենագրությունը, որը հեղինակի երկար տարիների գիտական քրտնաջան աշխատանքի արդյունքն է։ Նույն սեկտորը հրատարակել է Ռ. Դրամփյանի ուսումնասիրությունը՝ նվիրված նկարիչ Եղիշե Թադևոսյանին, Մ. Սարգսյանի «Մարտիրոս Սարյան» գիրքը և այլ աշխատություններ։

Ակադեմիայի հրատարակությունների մեջ մեծ տեղ է գրավում Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ գիտական հետազոտությունների հրատարակումը։

Վերջերս լույս ընծայվեց Ակադեմիայի տնտեսագիտական ինստիտուտի կոլեկտիվի կողմից պատրաստված «Սովետական Հայաստանը 35 տարում» աշխատությունը, որտեղ հարուստ փաստերով ներկայացված է ռեսպուբլիկայի տնտեսության զարգացման պատկերը։

Ակադեմիայի հրատարակչական պլաններում ընդգրկվում են գիտության գրեթե բոլոր ճյուղերը։ Լույս են տեսել աշխատություններ մաթեմատիկայի, աստղագիտության, բժշկության, երկրաբանության, աշխարհագրության, գյուղատնտեսության և այլ մասնագիտությունների գծով։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ակտիվ ղեկավարությամբ հրատարակվել են Բյուրականի աստղադիտարանի հաղորդումների և ակադեմիայի զեկույցների բազմաթիվ հատորներ ու պրակներ, որոնք արժանացել են գիտնականների բարձր գնահատականին։

Բուսաբանական ինստիտուտի կոլեկտիվը պրոֆ. Ա. Թախթաջյանի խմբագրությամբ պատրաստել և հրատարակել է «Հայաստանի ֆլորան» աշխատության առաջին հատորը։ Այս ինստիտուտի գծով հրատարակվել է նաև պրոֆ. Վ. Ղազարյանի «Երկամյա բույսերի զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունները» և «Միամյա բույսերի զարգացման և ծերացման ստադիականությունը» արժեքավոր մենագրությունները։

Ակադեմիայի հրատարակությունների մեջ ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն պարբերաբար հրատարակվող «Տեղեկագրերը»՝ հասարակական, բիոլոգիական և գյուղատնտեսական, ֆիզիկո-մաթեմատիկական ու տեխնիկական գիտությունների գծով։ Այդ «տեղեկագրերում» տպագրվում են գիտության համապատասխան ճյուղերին վերաբերող արժեքավոր հոդվածներ ու հաղորդումներ։

1956 թվականին ավելի կընդարձակվի ակադեմիայի հրատարակչության պլանը։ 1956 թվականին հրատարակվելու է 155 անուն գիտական գրականություն՝ 1500 տպագրական թերթ ընդհանուր ծավալով։ Այդ թվում հրատարակվելու են ռուս-հայերեն բառարանի 2-րդ հատորը, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի «Աստղային ասոցիացիաներ» աշխատությունը, ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Երեմյանի մենագրությունը՝ «Ստրկատիրական հասարակարգը հին Հայաստանում», ակադեմիայի իսկական անդամ՝ Մ. Ներսիսյանի «Ռուս-հայ հարաբերությունների պատմությունից», պատմական գիտ. դոկտոր Բ. Առաքելյանի «Հայաստանի քաղաքները 9—13-րդ դարերում» և այլ ուսումնասիրություններ։